Պ-436[4]-22.11.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածի 12.1 կետը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ.~~

~~12.1. Տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի, հրագործական բաղադրիչների եւ այլ պայթուցիկ սարքերի (նյութերի) վաճառքը թույլատրվում է բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի:~~

~~Հոդված 2. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 12.2 մասով հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«12.2 «Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների վաճառքը 16 տարին չլրացած անձանց արգելվում է»:~~

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 12.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12.1. Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների, հրագործական արտադրատեսակի, (բացառությամբ կենցաղային նշանակության 1-ին և 2-րդ դասերի արտադրատեսակների) վաճառքը թույլատրվում է բացառապես համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի»:

2) լրացնել նոր 12.2-րդ մաս՝ հետևյալ հովանդակությամբ.

«12.2 «Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակի վաճառքը 16 տարին չլրացած անձանց արգելվում է»:

~~Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո: